ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի հայցորդ, պատմության մագիստրոս
susanna-araqelyan@mail.ru

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Մարդասիրական ընկերություն, դպրոցներ, որդեգրություն, Դավիթ Ռոստոմյան, կրթություն, մշակույթ, եկեղեցի, օրիորդաց ուսումնարան, դպրոց, անապահով ընտանիք, ցարական իշխանություն, դրամական նպաստներ:

XIX դարի երկրորդ կեսին ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ Այսրկովկասի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով Այսրկովկասի հայության միջավայրում սկսում են ստեղծվել բարեգործական ընկերություններ, որոնցից առաջինը Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունն էր:

1864 թ. բժիշկ Դավիթ Ռոստոմյանցի նախաձեռնությամբ ստեղծված այս ընկերությունը իր գոյության մոտ վաթսուն տարիների ընթացքում, հավատարիմ մնալով «ռուսահայերի մեջ բարեգործություն և լուսավորություն տարածելու» իր հռչակած առաքելությանը, ակտիվ գործունեություն է ծավալել ու զգալի ձեռքբերումներ ունեցել կրթական, մշակութային և սոցիալական ոլորտներում: Բայց հայոց մարդասիրական ընկերության կողմից արևելահայության կրթական կյանքում ավելի մեծ ակտիվություն ցուցաբերելու և արդյունքների հասնելու հանգամանքը հաշվի առնելով՝ զեկուցումը

նվիրվել է միայն կրթական ոլորտում ընկերության ծավալած գործունեության լուսաբանմանը:

Ընկերության ստեղծման խթանիչ ազդակ է հանդիսացել նաև «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած մեծ լուսավորիչ Ստեփանոս Նազարյանցի «Հայերի կոչումն մարդկության մեջ» հոդվածը[1]: Այդ հոդվածում, խոսելով հայերի անցյալի և ներկայի մասին, Ս. Նազարյանցն առաջարկում է ստեղծել մի ընկերություն, որի նպատակը պիտի լիներ ժողովրդի մեջ լուսավորության տարածումը:

Ընկերության գործունեության կարևորագույն ուղղությունը, թերևս, կրթականն էր, որտեղ այն ունեցել է նկատելի ձեռքբերումներ:

Դպրոցներ: Ժամանակի ոգուն համապատասխան՝ ռուսահայ իրականությունն այդ շրջանում գործ ուներ երկու կարգի՝ պետական և ազգային դպրոցների հետ: Առաջիններն ամեն ինչ անում էին հային հարազատ միջավայրից հեռացնելու համար, իսկ ազգային դպրոցները՝ ձգտում էին հայ պահել նրան: Հայոց եկեղեցին, ստեղծելով հոգաբարձուների խորհուրդ և այդ նպատակի համար ստանալով ժողովրդի նյութական աջակցությունը, ստանձնել էր ազգային դպրոցի տնօրինությունը:

Բարեգործական ընկերություններն իրենց հերթին սկսում են գործել եկեղեցուն համահունչ: Շատ դեպքերում նման գործելաոճն այդ ընկերությունների համապատասխան կառույցներին հնարավորություն է տվել աջակցել կարիքավոր դպրոցականներին և ուսանողներին:

Իր կրթական գործունեության մեջ Մարդասիրականը կարևոր տեղ է վերապահել հայկական քաղաքային և գյուղական դպրոցների պահպանմանը:

---

[1] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, յունվար:

Սկզբնապես ընկերության ուշադրության կենտրոնում եղել են լոկ Բաքու քաղաքի երկսեռ դպրոցները:

1913 թ. հրատարակված «Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսավորչի» համառոտ տեսության մեջ ընկերությունն որպես իր կողմից ձեռնարկված առաջին գործ հիշատակում է օրիորդաց տարրական ուսումնարանը[2]: Նույն ժամանակ նաև կազմակերպվել է դրամահավաք արդեն գոյություն ունեցող եկեղեցական ծխական ուսումնարանի համար, որը հետագայում գտնվել է ընկերության տնօրինության ներքո:

1866 թ. Բաքվի օրիորդաց նախակրթարանը ժամանակավորապես փակվել է, քանի որ տեղի հայերն այդ ժամանակ դեմ էին իգական սեռի ներկայացուցիչների կրթությանը: Մարդասիրական ընկերության անդամները նախապես փորձել են հասարակությանը հարմարեցնել այն գաղափարին, որ աղջիկները ևս պետք է կրթություն ստանան: Միայն 1869 թ., շնորհիվ ընկերության հիմնադիր Դ. Ռոստոմյանի, Օրիորդաց ուսումնարանը վերաբացվեց և 1870 թ. ստացավ «Ս. Հռիփսիմյան» անունը[3]: Այն սկզբնապես ուներ 10-16 աշակերտուհի: Նրանք կարդում ու գրում էին հայերեն և ռուսերեն, սովորում ձեռագործություն, երգ և տնտեսություն կառավարելու սկզբունքներ[4]:

1874 թ. հաշվետվության մեջ մտահոգություն էր հայտնվում Բաքվի Օրիորդաց ուսումնարանում ստեղծված իրավիճակի վերա-

---

[2] Տե՛ս *Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսավորչի,* Բագու, 1914, էջ 3:

[3] Դավիթ Անանունը որպես դպրոցի վերաբացման տարեթիվ նշում է 1868 թվականը (տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն հայոց 1864–1913 թթ. (այսուհետ՝ ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն...), էջ 25):

[4] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 19 դեկտեմբերի, 1874, N 51:

բերյալ, արձանագրելով, որ այն ժամանակի պահանջների համեմատ չի գործում: Հաշվետվության մեջ դա բացատրվում էր նրանով, որ ընկերության հիմնադիրները կարծել են, թե հասարակությունը, ճիշտ գնահատելով դպրոցի կարևորությունը, դրամական և բարոյական աջակցություն կցուցաբերի, մինչդեռ նրանց սպասելիքները չէին արդարացել, և ընկերությունն իր սուղ միջոցներով ի զորու չէր եղել բարձր վարձատրությամբ լավ պատրաստված ուսուցիչներ վարձել, որոնք կբարձրացնեին դպրոցի հեղինակությունը: Ելնելով դրանից, նիստը ղեկավարող Խաչատուր Քանանյանցը խորհրդական ժողովին առաջարկել էր քննել և կարծիք հայտնել Բաքվի օրիորդաց ուսումնարանի փոխարեն մեկ ուրիշ, ավելի օգտակար գործ ձեռնարկելու, օրինակ՝ գյուղերում օրիորդաց դպրոցներ բացելու հարցը[5]:

Դեռևս 1865 թ. ընկերության հիմնադիր Դ. Ռոստոմյանը դիմում է Հայոց եկեղեցու Շամախի թեմի առաջնորդին, որպեսզի վերջինս ստանա Ս. Էջմիածնի համաձայնությունը՝ Բաքվի եկեղեցու եկամուտներից 500 ռ. քաղաքի տղաների համար նոր բացվող դպրոցին հատկացնելու համար: Դ. Ռոստոմյանը նաև հավելում է, որ ծախսերի մնացած մասը վճարվելու է ընկերության միջոցներից: Նա կարծում էր, որ Բաքվի հայ կրթված հասարակության մեջ կգտնվեն մարդիկ, որոնք գրեթե անվճար կաշխատեն դպրոցում[6]:

Թեմական առաջնորդը խորհուրդ է տալիս անձամբ դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին: 1866 թ. հուլիսի 9-ին Դ. Ռոստոմյանը և ընկերության ատենադպիր Ս. Վարշամյանը, տեղյակ պահելով Մարդասիրականի նպատակների մասին, հայտնում են, որ Բաքվում ընկերության ջանքերով արդեն բացվել են երկու նախակրթա-

[5] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 11–23:
[6] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 22:

ռաններ՝ տղաների և աղջիկների համար, որոնց պահպանման համար մեկ տարվա ընթացքում հատկացվել է 1456 ռուբլի[7]:

Նոր դպրոցի բացման փաստը որոշակիորեն անհանգստացնում է Շամախիի և Էջմիածնի հոգևոր իշխանության ներկայացուցիչներին:

Իր նամակին Դ. Ռոստոմյանը կցել էր նաև դպրոցի ծրագիրը, համաձայն որի ուսումնարանի առջև նպատակ էր դրված քառամյա կրթություն տալու միջոցով աշակերտներին ռուսական գիմնազիայի երկրորդ դասարան ընդունվելու հնարավորության ընձեռնումը կամ արհեստներ սովորելն ու հոգևոր կոչում ստանալը: Բոլոր աշակերտները՝ հարուստ թե աղքատ, անվճար էին սովորելու: Ուսումնարանի տարեկան ծախսը կազմելու էր 1500 ռուբլի[8]: Տարեկան ծախսի համար ուսումնարանին այդքան փոքր գումար հատկացվելը բացատրվում է նրանով, որ, ինչպես նշել ենք, ըստ Դ. Ռոստոմյանի, ուսուցիչներն անվճար էին դասավանդելու:

Վերոնշյալ ծրագիրն, անշուշտ, իր ժամանակի համար դժվար իրագործելի էր և քիչ բան է հայտնի դրա կենսագործման վերաբերյալ: Սոսկ արձանագրենք, որ 1875 թ. «Արարատ» ամսագրում հրատարակված մի հոդվածի համաձայն, Մարդասիրական ընկերությունն ի սկզբանե ուներ տղաների ուսումնարան, որը 1868 թ. փակվել է[9]:

Արդեն 1869 թ. գարնանը, պետական պաշտոնյաների աջակցությամբ, Բաքվի հայերը սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել դպրոցական գործում տիրող իրավիճակին[10]: Նրանք դիմում են Շամախիի թեմակալ առաջնորդին՝ խնդրելով նոր ծխական ուսումնա-

---

[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 24:
[9] Տե՛ս «Արարատ», տարի Է, մարտ, 1875, N 51, էջ 118:
[10] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 24:

ման բացել, պարտավորվելով աջակցել դպրոցի ծախսերին՝ ամեն տարի նվիրաբերելով 200 ռուբլի:

Երկար սպասված դպրոցը բացվում է 1869 թ. դեկտեմբերի 1-ին: Բայց այն հեռու էր Դ. Ռոստոմյանի պատկերացրածից: Այն ընդամենը նախակրթարան հիշեցնող կրթօջախ էր, որտեղ տիրացու ուսուցիչը սովորեցնում էր հայոց լեզու, վայելչագրություն և երգեցողություն, իսկ մեկ այլ վարժապետ՝ ռուսաց լեզու, վայելչագրություն և թվաբանություն: Դպրոցը, որն անվանվել էր Ս. Մեսրոպյան[11], ուսուցչական կայուն կազմ չունենալու և նյութական ու բարոյական արգելքների պատճառով, շուտով հայտնվում է ճգնաժամային իրավիճակում:

Մարդասիրական ընկերությունն ամբողջությամբ իր ուշադրության կենտրոնում էր պահում Հռիփսիմյանց իգական դպրոցը, իսկ արական դպրոցը, բացի Մարդասիրականից, գտնվում էր նաև եկեղեցական հոգաբարձության հոգածության ներքո: 1870 թ. այդ դպրոցներում սովորում էր 91 հոգի, որից 29-ը՝ իգական դպրոցում (25 հայ, 4 ռուս), 62-ը՝ արական դպրոցում: Դասավանդող ուսուցիչները 7-ն էին[12]:

Չնայած պետական պաշտոնյաները և Բաքվի շատ բնակիչներ խոստացել էին նյութապես աջակցել տղաների դպրոցին, բայց այն գտնվում էր միմիայն Մարդասիրականի հոգածության ներքո: Թեև, ըստ կարգի, տղաների դպրոցի ղեկավարումը պատկանում էր ծխական հոգաբարձությանը, իսկ Մարդասիրականի խորհուրդը լոկ նյութապես աջակցող պետք է լիներ, իրականում պատկերը բոլորովին այլ էր: Մարդասիրականի խորհուրդը դառնում է երկսեռ դպրոցների տերն ու տնօրենը, իսկ ծխական հոգաբարձությունը՝

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 26:
[12] Տե՛ս նույն տեղում:

սոսկ եկեղեցու եկամուտներից նպաստ վճարող[13]: Դպրոցների բացումից միայն 15 տարի անց Մարդասիրականը հրաժարվեց իր արտոնություններից և դպրոցները հանձնեց ծխական հոգաբարձությանը՝ իրեն վերապահելով լոկ խորհրդականի և նյութապես աջակցողի դերը[14]:

Եթե մինչև 1874 թ. Մարդասիրականը կենտրոնացած էր Բաքվում գործող դպրոցների ուղղությամբ, ապա 1875 թ. սկսած Մարդասիրականը սկսում է հատուկ ուշադրություն դարձնել գավառական դպրոցներին[15]: Նկատի ունենալով, որ Բաքվում արդեն կա երկսեռ ուսումնարան, ընկերությունը որոշում է փոխել իր գործունեության բնույթը՝ շեշտը դնելով անուսում գյուղացիներին կրթելու և որդեգիրներ պահելու վրա:

Սկզբում դա էպիզոդիկ բնույթ էր կրում և հիմնված էր առանձին անհատների դիմում-խնդրագրերի վրա:

Գործունեության այս ձևը փոխվում է 1875 թ. օգոստոսին, երբ Ղուբա գավառի Քիլվար գյուղում բացվում է ծխական դպրոց: Գյուղի բնակիչները դիմումով խնդրում են Մարդասիրականին՝ որպեսզի վերջինս հանձն առնի դպրոցի ուսուցչին տրվելիք ամսական 12 ռուբլի 50 կոպեկ աշխատավարձի վճարումը: Ընկերությունն ընդունում է դիմումը՝ այդպիսով թևակոխելով դպրոցական գործունեության նոր՝ կանոնավոր օգնության փուլ[16]:

Միջոցների սղության պատճառով Մարդասիրականը որոշել էր առաջնահերթ օգնություն հատկացնել այն գավառներին կամ գյուղերին, որտեղ հայ բնակչությունը գտնվում էր ընչազուրկ և իրավազուրկ վիճակում: Այդ սկզբունքը ընկերության համար դարձավ ելակետային: Դավիթ Անանունի բնութագրմամբ՝ Մարդասիրական ըն-

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 27:
[14] Տե՛ս նույն տեղում, էջ 28:
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 204, թ. 3 և շրջ.:
[16] Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 5:

կերությունն այնտեղ էր, որտեղ առաջնային խնդիր էր լեզվի վերականգնման հարցը, որտեղ հայկական մնացորդի գլխին կախված էր անհետացման վտանգը, որտեղ, վերջապես, մղվում էր հավասարության քարոզչություն: Այդ վայրերից էին Ղուբայի, Նուխու, Շամախու և Գորիի գավառները: Հայ գյուղացիությունն այդ վայրերում թաթախոս էր, թրքախոս, վրացախոս և առկա էր «նրանց մեջ թշնամություն-բարեկամներ», ինչը խանգարող հանգամանք էր հանդիսանում գյուղական համայնքների խաղաղ գոյատևման համար[17]:

1880-ական թթ. Մարդասիրականը սկսում է ուշադրություն դարձնել դպրոցների ներքին կարգ ու կանոնին, ապա նաև առողջապահությանը: 1881 թ. որոշվում է աշակերտների տարեկան ընդունելությունը կազմակերպել երկու փուլով՝ սեպտեմբերին և հունվարին:

1882 թվականից սկսեցին ուշադրություն դարձնել Մարդասիրականի ուսումնարաններում դասավանդվող առարկաների բովանդակությանը և ծավալին:

Պետական դպրոց ընդունվելու համար հարկ էր առաջին դասարանից սկսած հատուկ ուշադրություն դարձնել ռուսաց լեզվի ուսուցմանը: Հայկական դպրոցներում առարկաների դասավանդումը իրականացվելու էր ռուսերեն, իսկ հայոց լեզուն պարզապես լինելու էր առարկաներից մեկը[18]:

Ընդունված ծրագիրը գործեց ընդամենը մեկ տարի՝ մինչև 1883 թ., երբ դպրոցներն անցան ծխական հոգաբարձության տնօրինության ներքո: Թեպետ դա Մարդասիրական ընկերությանը չխանգարեց հետայդու ևս զբաղվելու դպրոցական հարցերով: Խնդիրը նոր հնչեղություն ստացավ 1887 թ. Բաքվի Գիմնազիչես-

---

[17] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 40:
[18] Տե՛ս նույն տեղում, էջ 34–35:

կայա փողոցում ընկերության միջոցներով շենքի կառուցման ավարտից հետո[19]: Առաջադրված նոր խնդիրների հիման վրա Մարդասիրականը եկավ նոր եզրահանգումների: Արձանագրելով, որ եկեղեցական-ծխական ուսումնարաններն իրենց սահմանափակ հնարավորություններով ի զորու չեն բավարարելու հայ ժողովրդի հոգևոր և մտավոր պահանջները, ճիշտ էր համարվում, որ ընկերության միջոցներով կառուցված շենքում Շամախու թեմի համար բացվի մի նոր թեմական դպրոց: Որպեսզի նոր դպրոցը զերծ լինի խնդիրներից, առաջարկվում էր նրա վարչությունը կազմող հոգաբարձուների կեսին ընտրել Մարդասիրականի խորհրդի անդամներից, մյուս կեսին՝ ժողովրդից[20]: Աջակցություն ստանալու նպատակով Մարդասիրականի խորհուրդը, իր վրա վերցնելով նախաձեռնությունը, դիմում է Շամախու թեմականին: Սակայն իրավիճակի բերումով հնարավոր չեղավ ոչինչ անել[21]:

Մարդասիրականը հետևողականորեն տեղեկատվություն էր ստանում իր հովանավորության տակ գտնվող դպրոցներից, որպեսզի վստահ լիներ, որ իր տրամադրած նպաստները տեղին են օգտագործվում:

Մարդասիրական ընկերությունից որոշակի աջակցություն են խնդրել Էջմիածնի գավառի Գեչրլու գյուղի եկեղեցական-ծխական ուսումնարանի հոգաբարձությունից[22], Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցից: Դա երևում է վերջինիս հոգաբարձության կողմից 1897 թ. հունիսի 13-ին ընկերությանը հղած հավաստագրից, որ ստացել է իր համար նախատեսված տարեկան 300 ռուբլի գումարի կեսը[23]: Անշուշտ, կարող է առաջանալ այն բնական հարցադրումը, թե ըն-

[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 204, թ. 3 և շրջ.:
[20] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 35:
[21] Տե՛ս նույն տեղում, էջ 36:
[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 168:
[23] Տե՛ս նույն տեղում, գ. 44, թ. 7:

կերությունն ինչու էր նպաստ հատկացնում այն քաղաքի դպրոցին, որտեղ գործում էր ավելի զորեղ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը:

1875–1896 թթ. Մարդասիրական ընկերությունն աջակցել է Քիլվարի, Խաչմազի, Մադրասայի, Վարդաշենի, Ս. Թարգմանչաց, Ամրուանի, Սուլթան-Նուխիի, Ղուբայի երկսեռ, Շամախիի օրիորդաց, Բեգլարքենդի, Գիրքի, Ղալագեայի, Մեծսարիի, Ախալքալաքի, Գանձակ գյուղի, Զարգարյանի, Ճալեթի, Գետաբեկի, Իդելեցիքի, Վերին-Ազայի, Գյառգյառի, Հադրութի և Նիժի դպրոցներին, որոնց համար ընկերության միջոցներից ծախսվել է մոտ 20.000 ռուբլի[24]:

1880-ական թթ. սկզբին հայկական դպրոցները կանգնեցին փակման վտանգի առջև: Ցարական իշխանությունները ոչ միայն չէին աջակցում, այլև խոչընդոտում էին հայկական դպրոցի զարգացմանը: Նրանք անթույլատրելի էին համարում, որ հայոց հոգևոր իշխանությունը ծխական դպրոցներից բացի վերահսկողություն ուներ նաև մասնավոր անձանց կողմից բացված դպրոցների վրա, որոնք պետք է ենթարկվեին պետական ուսումնարանական վարչությանը[25]: Նման իրավիճակում, կանգնելով երկընտրանքի առջև, Մարդասիրական ընկերության խորհուրդը ուսումնարանական վարչության փոխարեն նախապատվություն էր տվել հոգևոր իշխանություններին, մանավանդ, որ վերջիններս նյութական և բարոյական առումով գործուն մասնակցություն էին ունեցել դպրոցների պահպանության գործին:

1885 թ. մարտի 4-ի կարգադրության համաձայն փակվում են Բաքվի հայոց երկսեռ դպրոցները: Մարտի 5-ին Բաքվի ոստիկանապետը հատուկ գրություն է ուղարկում Մարդասիրական ընկե-

---

[24] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 43–44:
[25] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

ությանը, որով, ըստ էության, առաջարկում է ուսումնարանները պահպանել որպես հասարակական դպրոցներ՝ ուսումնարանական վարչության ենթակայության ներքո: Այդ գրության համաձայն, ծխական-եկեղեցական դպրոցները դադարում էին գործել, եթե հասարակական չէին դառնում[26]: Մարդասիրական ընկերության խորհուրդը, խորհրդակցելով Սինոդի և Շամախիի թեմի առաջնորդ Թադևոս եպիսկոպոսի հետ, որոշում է մինչ նոր կաթողիկոսի գահակալությունը, դպրոցները թողնել փակ:

1886 թ. սեպտեմբերից հայոց եկեղեցական-ծխական դպրոցները, այդ թվում նաև Բաքվի երկսեռ դպրոցները, վերաբացվեցին, բայց արդեն ծխական հոգաբարձության իշխանության ներքո: Նոր իրավիճակում Մարդասիրականը դառնում է լոկ որպես նյութապես աջակցող հիմնարկություն: Դպրոցների ծխական հոգաբարձության ներքո գտնվելու ընթացքի վերաբերյալ ընկերության արխիվային փաստաթղթերում շատ քիչ տեղեկություններ կան: Մարդասիրականը ֆինանսապես աջակցում էր միայն այն գյուղերին, որոնք ի զորու չէին սեփական միջոցներով դպրոցներ ունենալ: Բայց ընկերությունը չէր հոգում դրանց բոլոր ծախսերը, այլ օգնում էր մասնակիորեն, երբեմն տրամադրելով չնչին գումար՝ ձգտելով հասնել այն բանին, որ գյուղացիները լուծեն գոնե դպրոցի համար շենք հատկացնելու հարցը:

1890–1894 թթ. Մարդասիրականը զբաղված էր թեմական դպրոց բացելու հարցով: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Ներսես Աբելյանցի, Աստվածատուր Կաճկաճյանցի, Հայրապետ Ղուկասյանցի և Աստվածատուր Գալստյանցի մասնակցությամբ: Նրանք կազմեցին բացվելիք դպրոցի ծրագիրը: Ենթադրվում էր, որ այն պետք է ունենա երեք նախակրթարան և չորս հիմնա-

[26] Տե՛ս նույն տեղում, էջ 29–30:

կան դասարան: Խնդրին արագ լուծում տալու ակնկալիքով ընկերության խորհուրդն իր նախաձեռնությամբ 1891 թ. ապրիլին դիմում է Շամախիի թեմական առաջնորդին: Բայց հարցն այդպես էլ լուծում չի ստանում: Ավելին, փակվում են նաև թերի ուսումնարանները: Նման իրավիճակը շարունակվում է մինչև 1896 թ.՝ հայկական դպրոցների երկրորդ փակումը, որը խեղդեց մեծ ջանքերով և զոհողություններով ստեղծված կրթօջախների ծաղկումը:

Մարդասիրական ընկերության կրթական գործունեության կարևոր քայլերից մեկն էլ իշխանությունների համաձայնությամբ կիրակնօրյա դպրոցի բացումն էր, որի նպատակը հայ ժողովրդի անգրագետ դասին կրթելը, նրա մտավոր և բարոյական զարգացմանն աջակցելն էր: Դպրոցը բացվում է Մ. Արամյանցի տեսչությամբ, բայց ուսուցիչների և աշակերտների պակասի պատճառով նրա գործունեությունը երկար չի շարունակվում:

Մյուս կարևոր ձեռնարկը կար ու ձևի դպրոց բացելու փորձն էր: Դեռևս 1891 թ. Բաքվում մի խումբ հայ կանայք ջանում էին հիմնել «Հայուհեաց բարեգործական ընկերութիւն», որի համար նրանք անգամ 15 հազար ռուբլի գումար ունեին, որը պահպանելու համար տրվել էր Մարդասիրականին: Ի զորու չլինելով սեփական ուժերով լուծելու խնդիրը, նրանք որոշում են համագործակցել Մարդասիրականի հետ և հանդես գալ վերջինիս հովանավորությամբ: Հաշվի առնելով, որ Բաքվի օրիորդաց դպրոցն իր սահմանափակ կարգավիճակով չի բավարարում տեղի չքավոր հայ աղջիկների առօրյա պահանջները, Մարդասիրականը որոշում է ընդառաջել տիկնանց դիմումին:

Ի մի բերելով կրթական ոլորտում Մարդասիրական ընկերության ծավալած 32 տարվա գործունեությունը՝ ընդհուպ մինչև 1896 թ., կարող ենք արձանագրել, որ այդ տարիներին ընկերությունը դպրոցների վրա ծախսել է 55 հազար ռուբլի: Բաքվի երկսեռ

դպրոցներում 1869–-1884 թթ. սովորել է՝ արական դպրոցում՝ 933, իգական դպրոցում՝ 463 երեխա[27]: Նաև արձանագրենք, որ այդ տարիներին ընկերությունը կառուցել է հատուկ շենքեր, որոնք անվճար հատկացրել է դպրոցներին:

Կրթության ոլորտում հաջորդ կարևորագույն գործը եղել է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության ֆինանսավորումը (Ընկերությունն իր փաստաթղթերում նրանց հիշատակում է որպես որդեգիրներ)[28]: Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գործունեության մեջ առանցքային տեղ են զբաղեցրել նաև անապահով ընտանիքների երեխաների կրթությունն ու դաստիարակությունը, նման ընտանիքներին դրամական նպաստներով աջակցելը և այլն: Դրա համար հիմք են հանդիսացել ինչպես սեփական դիտարկումների ընթացքում անապահով ընտանիքների բացահայտումներն, այնպես էլ անձնական դիմում-խնդրագրերը:

Ի սկզբանե ընկերության առջև դրված նպատակներից մեկը հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար ազգային մտավորական կադրերի պատրաստումն էր, ինչը կարող էր էապես բարելավել կովկասահայերի դերակատարությունը տարածաշրջանում:

Ընկերության 1873 թ. ընթացիկ ծախսերի մեջ, որպես որդեգիրներ հիշատակվում են՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանը, Հայկուհի Տատյանա Միլանսկին, Ներսես Աբելյանը, Սարգիս Միրզայան Մեհրաբյանը, որոնց համար վճարվել է 540 ռ. 64 կ.: Բացի այդ, Բաքվի գիմնազիայի աղքատ ուսանողներին հատկացվել է 103 ռ.,

---

[27] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 36:

[28] Ծանոթ. Որդեգիրներն այն երիտասարդներն էին, որոնց մարդասիրական ընկերությունն իր ամբողջ գործունեության ընթացքում խնամքի տակ է պահել: Օգնել է նաև այլևայլ դպրոցներում սովորող հայ պատանիներին դրամով և գրքերով: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձրել որդեգիրների վրա, քանի որ հույս ուներ, որ նրանք ուսումը ավարտելուց հետո հասարակության համար պիտանի անդամներ կդառնան (տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 41):

96 կ., Ծխական ուսումնարանի աղքատ աշակերտների և օրիորդաց ուսումնարանի աշակերտուհիների դասագրքերի համար՝ 22 ռ., 5 կ., փոստի և հեռագրի համար՝ 15 ռ.,

Մինչև 1881 թ. ընկերությունը չէր կարևորում, թե ինչ մասնագիտությամբ մտավորականներ պետք է պատրաստել: Սոսկ կարևորում էր, որ նյութական միջոցներն անիմաստ չվատնվեն այն անձանց վրա, ովքեր վստահություն չէին ներշնչում: Մարդասիրական ընկերությունը պահանջում էր, որ իր որդեգիրները սովորեն մանկավարժություն և ավարտելուց հետո աշխատեն դպրոցներում:

Բայց այս գործելաոճը նույնպես արդյունք չի տալիս, քանի որ ոչ բոլոր որդեգիրներն էին ցանկանում սովորել մանկավարժություն: Նրանցից շատերը գերադասում էին այլ մասնագիտություններ, իսկ որպես փոխհատուցում, խոստանում էին հետագայում մաս-մաս վերադարձնել իրենց հատկացված օգնությունը:

Մարդասիրական Ընկերության 1886 թ. հրատարակված միամյա հաշվետվության մեջ նշվում էր, որ նախորդ տարում ընկերությունն ունեցել է 8 որդեգիր, որոնցից յուրաքանչյուրին տվել է տարեկան 905 ռուբլի: Այդ որդեգիրներից Ղուբայի գավառի Խաչմազ գյուղացի Բագրատ Յաղուբյանը սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տիգրան Նավասարդյանը պատմություն և լեզվաբանություն է սովորել Փարիզի համալսարանում: Շամախեցի Սարգիս Ծատուրյանը սովորում էր Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում: Շուշեցի Լևոն Աթաբեգյանը սովորում էր Պետերբուրգի անտառագիտական և գյուղատնտեսական ինստիտուտում: Ազգությամբ ուդի Սարգիս Կուկունյանը 1885 թ. հունիսին մեկնել էր Պետերբուրգ՝ Ուսուցչական ինստիտուտում սովորելու, բայց իրենից անկախ պատճառներով չէր կարողացել դա իրագործել: Խորհրդին գրած նամակով նա հայտնում էր, որ պատրաստվում է Ուսուցչական ինստիտուտ ընդունվել երկու տարի

հետո: Բացի նշվածներից, որդեգիրների թվում էին Բաքվի ռեալական ուսումնարանի սան Ն. Մելիք-Գյուրջինյանը, Մոսկվայի Պետրովսկի ակադեմիայում սովորող Գ. Տեր-Ստեփանյանը և Է. Փիրբուդաղյանի մասնավոր դպրոցի աշակերտ Կարապետ Մատթևոսյանը:

25 տարվա ընթացքում Մարդասիրական ընկերությունն ունեցել է 20-ից ավելի որդեգիր և՛ արտասահմանյան, և՛ ռուսական կրթօջախներում: Այս թվի մեջ չեն մտնում այն որդեգիրները, որոնք սովորել են Բաքվի դպրոցներում:

Բացի վերն արդեն հիշատակված ութ հոգուց Մարդասիրականի որդեգիրների թվում էին.

1. Գաբրիել Ռոմանովսկին (շամախեցի), 2. Ավագ Գրիգորյանը (նուխեցի), 3. Միքայել Տեր-Օհանյանը 4. Ներսես Աբելյանը (շամախեցի), 5. Աստվածատուր Գալստյանը (շամախեցի), 6. Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդան) (Շուշի գավառից), 7. Տիկին Նադեժդա Միլանսկին, 8. Տեր-Մարկոսյանը, 9. Տրդատ Մատինյանը (գանձակեցի), 10. Նիկողայոս Փիրումյան (ղուբեցի), 11. Միքայել Ղալաբեդյանը (շուշեցի), 12. Ջ. Հարությունյանը (շուշեցի), 13. Ալեքսանդր Զաքարյանը (շամախեցի), 14. Գևորգ Ղարաջյանը (Հնչակյան կուսակցության հիմնադիրներից, ապա նշանավոր մենշևիկ Ստեթան Արկոմեդն է) (գանձակեցի):

1897 թ., երբ Բաքվի Մարդասիրական ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվում է գրական ֆոնդը, որոշվում է որդեգրել նաև հայ գրողների սովորող երեխաներին: 1897 թ. սկսած Մարդասիրականը որդեգրում է Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի մեկական և Ալեքսանդր Շիրվանզադեի երկու որդիներին: Ղ. Աղայանի որդուն նշանակվեց 300 ռուբլի ուսման և սննդի վճար, Հ. Թումանյանի որդուն՝ 240 ռուբլի, Ալ. Շիրվանզադեի որդիներին՝ 400 ռուբլի: 1898 թ. այդ գումարների չափը փոխ-

վեց: Ղ. Աղայանի որդին ստացավ 450 ռուբլի, Հ. Թումանյանինը՝ դարձյալ 240 ռուբլի, իսկ Ալ. Շիրվանզադեի որդիները՝ 450 ռուբլի[29]: Նույն տարում որդեգրվում է նաև Պերճ Պռոշյանի որդին, որի համար վճարվում է 300 ռուբլի:

Մարդասիրականի արխիվային ֆոնդերում առ այսօր պահպանվում են Հ. Թումանյանի շնորհակալագրերը[30], Ալ. Շիրվանզադեի երկու որդիներին թոշակ նշանակելու խնդրագիրը, Վ. Փափազյանի խնդրագրերը և շնորհակալագիրը, Պ. Պռոշյանի խնդրագիրը[31]:

Բացի որդեգիրներից, Բաքվի Մարդասիրականը միջոցներ է տրամադրել նաև Բաքվի ռեալական ուսումնարանում և Բաքվի մասնավոր դպրոցներում սովորող չքավոր ու աղքատ աշակերտների ուսման վարձերը հոգալու համար: Ընդհանուր առմամբ, Բաքվի տարբեր կրթօջախներում սովորողներին որպես ուսումնավճար հատկացվել է 5918 ռուբլի: Այդ գումարի մեծագույն մասը հատկացվել է Բաքվի ռեալական դպրոցի և գիմնազիայի սովորողներին:

Վերը նշված ժամանակահատվածում ուսման նպատակով ընկերության տրամադրած միջոցները կազմել են 14.645 ռ. 30 կ.[32]:

Վերոնշված անձանցից միայն 13-ն են ավարտել իրենց ուսումը, իսկ մնացածը կամ մահացել է, կամ ինքնակամ թողել կրթությունը:

Որդեգիրների ցանկից ակնհայտ է, որ Մարդասիրական ընկերությունն իր գործունեությունը ծավալել է ոչ միայն Բաքու քաղաքում, այլև Շամախիում, Թիֆլիսում, Գանձակում, Երևանի գավառում, Շուշիում և այլուր:

---

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 57–58:

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 63, թ. 15, գ. 65, թ. 1 և շրջ., 2 և շրջ.:

[31] Տե՛ս նույն տեղում, գ. 63, թ. 3 և շրջ., 4, գ. 65, թ. 3 և շրջ., թ. 7, 8 և շրջ., թ. 11 և շրջ., թ. 12, թ. 13:

[32] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, գ. 55, թ. 23–24:

1889–1894 թթ. ընկերությունն առավելապես փորձում էր օժանդակել տարրական դպրոցներին: Բայց իշխանությունների կողմից 1896 թ. հայկական դպրոցների փակումից հետո վերադառնում է որդեգրության գործին՝ ծախսելով խոշոր գումարներ: Շուրջ վեց տարի՝ 1894–1899 թթ., ընկերությունը չէր միջամտում որդեգիրների ընտրած մասնագիտություններին և հարցերը լուծում էր այնքանով, որքանով թույլ էին տալիս իր նյութական հնարավորությունները:

Որդեգրական գործունեության վրա ազդեցություն թողեց 1895 թ. կառավարության կողմից Մարդասիրականի կանոնադրության կետերից մեկի փոփոխությունը: Եթե նախկինում լոկ կարևորվում էր անձի ռուսահպատակ լինելը, ապա այսուհետ ընկերությունը չէր կարող որդեգիրներ պահել արտասահմանյան կրթօջախներում: Նրա գործունեությունը սահմանափակվում էր միայն Ռուսաստանի տարածքով[33]:

Բաքվի կրթօջախներից բացի ընկերությունն ուսումնավճարներ է հատկացրել նաև Այսրկովկասի այլ կրթօջախներում սովորողներին. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտներին՝ 300 ռուբլի, Թիֆլիսի գիմնազիայի մեկ աշակերտի՝ 90 ռուբլի, Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի մեկ սովորողի՝ 60 ռուբլի, Շուշիի թեմական դպրոցի աշակերտներին՝ 66 ռուբլի:

Մարդասիրականը ուսումնավճարներ է հատկացրել նաև Մոսկվայում (450 ռուբլի) և Խարկովում (150 ռուբլի) սովորող հայ ուսանողներին և միանվագ նպաստ (732 ռուբլի) Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի և այլ վայրերի ուսանողներին:

Ընդհանուր առմամբ, որպես ուսումնավճար, Մարդասիրականը տրամադրել է 7766 ռուբլի[34]:

---

[33] Տե՛ս ՀՊԹ, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն..., էջ 51:
[34] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

Երկրորդ կարգի 43 որդեգիրների համար, որոնց դեպքում Մարդասիրական ընկերությունը հոգացել է թե՛ ուսումնավճարի, թե՛ ապրուստի ծախսերը, ընդհանուր առմամբ հատկացվել է 25.102 ռուբլի:

Իսկական որդեգիրների համար (և՛ ուսումնավճար, և՛ ապրուստի ծախսեր) Բաքվի Մարդասիրական ընկերությունը ծախսել է 30.202 ռուբլի: Հարկ է նշել, որ Բաքվի Մարդասիրական ընկերությունը հոգացել է նշված 43 որդեգիրների մի մասի թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն կրթության ծախսերը:

Ընկերությունը որդեգիրների համար վճարել է ոչ միայն իր բյուջեից, այլև այդ նպատակով կտակված գումարների տոկոսներից: Այսպիսով, Բաքվի Մարդասիրական ընկերությունը որդեգիրների և ուսումնավճարների համար ծախսել է 37.968 ռուբլի: Դրանով հանդերձ, 43 որդեգիրներից քչերն են հայկական միջավայրում էական դեր ունեցել:

Նրանցից Ավագ Գրիգորյանը (հետագայում Գրիգոր քահանա) Բաքվում երկար տարիներ ուսուցչություն է արել Մարդասիրականի դպրոցներում: Նա նաև հրատարակել է մի քանի ժողովրդական երգիչների աշխատություններ, «Սոխակ Հայաստանի» տարածված երգարանը և առաջինն է արծարծել հայոց թատրոնի գաղափարը Բաքվում:

Աչքի ընկնող որդեգիրներից էր Ներսես Աբելյանը, որը երկար տարիներ աշխատել է Մարդասիրականի հաստատություններում: Նա նաև աշխատակցել է «Մշակին» ու «Արձագանքին», ուսումնասիրել և հրատարակել է Այսրկովկասի երկու գավառների գյուղացիության մասին արժեքավոր մենագրություններ և այլն: Ներսես Աբելյանը Մարդասիրականին մաս-մաս վերադարձրեց այն 1825 ռուբլի գումարը, որը նա ստացել էր որդեգրության ժամանակ: Այս առումով նա միակ բացառությունն էր:

Որդեգիրներից Աստուածատուր Գալստյանը երկար տարիներ առանց վարձատրության վարել է Մարդասիրականի անդամ-ատենադպիրի պաշտոնը, եղել է ավագ ուսուցիչ Բաքվի դպրոցում, գրել է ընկերության 25 – ամյակի պատմությունը և այլն...

Որդեգիրներից Տիգրան Նավասարդյանը հայտնի դարձավ որպես բանահավաք, հայկական ժողովրդական հեքիաթներ ժողովող:

Ամենանշանավոր որդեգիրներից էր Սարգիս Կուկունյանը, որն անջնջելի հետք է թողել հայ ազատագրական շարժման մեջ:

Որդեգիր Գևորգ Ղարաջյանը աշխատակցել է «Մուրճին» և «Մշակին», ուսուցչություն է արել հայկական թեմական դպրոցներում, հայտնի է իբրև հայ առաջին մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ:

Մարդասիրականի մյուս որդեգիրները, որոնք հիմնականում բժիշկներ, փաստաբաններ և ճարտարապետներ էին և այլն, չնչին բացառությամբ, առանձնապես ոչնչով չեն արտահայտվել հայ հասարակական կյանքի մեջ, անգամ չեն հետաքրքրվել Մարդասիրականի գործերով[35]:

Ընկերության հետագա տարիների հաշվետվությունների մեջ որդեգիրների մասին այլևս հիշատակություններ չկան: Որդեգրական գործունեությունը հետ է մղվում՝ տեղը զիջելով ոչ պակաս կարևոր գործունեության ոլորտների, որոնք այլ թեմայի նյութ են:

Վերոշարադրյալ նյութը հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ Բաքվի Մարդասիրական Ընկերությունն իր հնարավորությունների սահմաններում արել է ամեն ինչ, որպեսզի աջակցի նյութապես անապահով, բայց ուսման տենչ ունեցող հայ պատանիներին ու երիտասարդներին ստանալու հնարավորինս որակյալ կրթություն: Ընկերության համար հատկապես առաջնահերթ կար-

[35] Տե՛ս նույն տեղում, էջ 53, 54:

ևորություն ուներ փակման վտանգի առաջ կանգնած հայկական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստման խնդիրը: Քաջալերվում էին մասնավորապես այն որդեգիրները, որոնք ավարտելուց հետո աշխատելու էին որպես ուսուցիչ: Չնայած Մարդասիրականի գործունեության այդ ոլորտի վերաբերյալ մամուլում ժամանակ առ ժամանակ տեղ են գտել դժգոհություններ, բայց չպետք է մոռանալ, որ Մարդասիրականի միջոցները, իրոք սուղ էին, իսկ կրթական և որդեգրական գործունեությունն էլ նրա աշխատանքի միակ բնագավառը չէր:

О ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОГО ФИЛАНТРОПИЧЕСКОГО ОБЩЕСТВО В БАКУ В ОБЛАСТИ ОБРАЗОВАНИЯ

АРАКЕЛЯН С.

Резюме

Ключевые слова: гуманитарное общество, школы, опека, Давид Ростомян, образование, культура, церковь, женское училище, мужское училище, необеспеченная (малоимущая) семья, царское правительство, денежные пособия.

В статье представлена деятельность Бакинского армянского гуманитарного общества, охватывающая просветительско-образовательную сферу вплоть до второй попытки царского правительства закрыть армянские национальные школы и (ограничить?) сферу опекунства. Общество долгие годы брало на себя учебные расходы неимущих армянских юношей, стремящихся получить образование, но лишенных этой возможности. Его целью являлась

подготовка кадров национальной интеллигенции для различных сфер общественной жизни, а также содействие деятельности армянских школ ради сохранения армянского языка, что в условиях ассимиляционной политики царской России было очень важно.

THE ACTIVITY OF THE ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN THE FIELD OF EDUCATION

ARAKELYAN S.

Summary

Keywords: Humanitarian Society, schools, guardianship, David Rostomyan, education, culture, church, women's school, men's school, needy family, Tsarist government, cash benefits.

This article describes the educational and school-building activities carried out by the Armenian Humanitarian Society of Baku until the second attempt by the tsarist authorities to close the Armenian national schools and to stop the child adoption system. The Society paid the tuition fees of poor Armenian youths who aspired to study but could not afford to pay. The main goal of the Society was to train professionals for the various needs of public life and to support the Armenian schools in order to ensure the preservation of the Armenian language, which was essential in the conditions of the assimilation policy of tsarist Russia.